ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԽԱՂԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ ՆՈՐԱՇԵՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ՍԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

ԳԼՈՒԽ 1. ԽԱՂԸ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

1.1. Խաղերի և երաժշտության կարևորությունը դասապրոցեսում……4

1.2 Ինչո՞ւ են խաղն ու երաժշտությունը արդյունավետ……5

ԳԼՈՒԽ 2. ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ. ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

2.1 Կրթական պլանավորում. խաղերի և երաժշտական տեխնիկայի կիրառումը օտար լեզվի դասավանդման մեջ ……5

2.2 Ի՞նչ նորարարական մոտեցումներ են հարկավոր/հնարավոր խաղերի և երաժշտության միջոցով օտար լեզուների ուսուցման գործընթացում. նոր առաջարկներ……7

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……10

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ……..12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հասարակական, քաղաքական, տնտեսական և կենսական կարևորության այլ ոլորտներում տեղի ունեցող զարգացումները հանգեցրել են զգալի փոփոխությունների նաև կրթության ոլորտում: Տարեցտարի մեծանում է օտար լեզուների դերը, մասնավորապես, պետական մակարդակով միջազգային բազմակողմ գործակցության համատեքստում:

Օտար լեզուների ուսուցումն սկսվում է դեռ նախադպրոցական տարիքից: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել այն դժվարությունները, որոնց օտար լեզուների ուսուցման ընթացքում բախվում են փոքր տարիքի երեխաները, որոնք լիարժեք չեն տիրապետում նույնիսկ մայրենի լեզվին: Ուստի, ուսուցչի խնդիրն է հետաքրքրել տարբեր տարիքային խմբերի երեխաներին՝ ուսումնասիրել օտար լեզուները և ամեն դասաժամը դարձնել հաճելի արկած: Այս հարցում օգնության են գալիս խաղերը, ակտիվ ժամանցը, երաժշտությունը, կինոն: Ճիշտ դասակազմակերպումն օգնում է ձևավորել օտարալեզու տեղեկատվական բազա՝ բառապաշար, քարացած արտահայտությունների սերտում, տրամաբանության զարգացում, օտարերկրացիների հետ անկաշկանդ շփում, խոսքի կառուցման մեխանիզմներ: Այս ճանապարհին խաղերի օգտագործումը երեխաների մոտ առաջացնում է դրական հույզեր, օգնում կենտրոնանալ դասապրոցեսի վրա, սովորել ավելի թեթև մթնոլորտում, երկարաժամկետ և լավ յուրացնել ուսումնասիրվող առարկան:

Խաղերի և երաժշտության կիրառումը կատարում է երկու հիմնական գործառույթ՝ գիտելիքների համախմբում և նոր գիտելիքների ու հմտությունների կուտակում, որոնք էլ ավելի են կարևորվում թվայնացման մեր դարաշրջանում:

Այսպիսով՝ ժամանակակից մասնագետները, ուսուցիչները, դասախոսները կանգնած են դասապրոցեսի արդիականացման բարդ խնդրի և մանկավարժական մեթոդների զինանոցը վերանայելու անհրաժեշտության առաջ:

Այս խնդիրները հասկանալը և նոր լուծումների գեներացումն էլ հենց ընկած են մեր աշխատանքի հիմքում: Մեր նպատակն է դիտարկել օտար լեզվի դասավանդման գործում խաղերի արդյունավետությունը, ցույց տալ

աշակերտների առանձնահատկությունները հաշվի առնելու և նրանց դասապրոցեսի ակտիվ մասնակիցը դարձնելու կարևորությունը, ինչպես նաև սովորելու հարցում նրանց երկարաժամկետ կտրվածքով հետաքրքրելու եղանակներ առաջարկելը:

ԳԼՈՒԽ 1.

ԽԱՂԸ ԵՎ ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑ

1.1. Խաղերի և երաժշտության կարևորությունը դասապրոցեսում

Շատ հետազոտողներ դեռևս 19-րդ դարից ի վեր փորձել են հասկանալ խաղի բնույթը, վերլուծել այդ երևույթի առաջացման դրդապատճառները, ազդեցությունը մարդու զարգացման վրա: Նման հետաքրքրվածությունը պայմանավորված է խաղի հոգեբանական, մանկավարժական, սոցիոլոգիական, պատմական, լեզվաբանական և այլ ասպեկտներով:

Հարկ է հիշատակել խաղերի և երաժշտության միջոցով ուսուցման վերաբերյալ ավստրիացի հոգեբան, հոգեբույժ Ա. Ադլերի ուսումնասիրությունը. նա ապացուցել է, որ վերոնշյալ մեթոդաբանությունը թույլ է տալիս զարգացնել երեխաների մտավոր ունակությունները, ինչպես նաև կիրառել այն որպես թերապիա: Ադլերն առանձնացրել է խաղի մի քանի օգտակար գործառույթ՝ նմանակում, իրական կյանքից դրվագների վերարտադրում, երեխայի փորձի արտացոլում, ճնշված տրավմաների արտահայտում, այլ դերակատարների հետ փորձի փոխանակում, նոր իրողությունների ընկալում:

Այսպիսով՝ մի շարք գիտնականների հետազոտությունների հիման վրա հանգում ենք եզրակացության, որ անհրաժեշտ է քայլել ժամանակին զուգընթաց, հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները, գիտակցել նրանց կյանքի վրա ուսումնական հաստատության և մանկավարժների ազդեցությունը, համաշխարհային նոր զարգացումների ու ձեռքբերումների լույսի ներքո վերանայել դասավանդման առկա մեթոդները:

1.2 Ինչո՞ւ են խաղն ու երաժշտությունը արդյունավետ

Վերջին տարիներին ջնջվում են մարդկանց մեջ շփման բոլոր սահմանները, համացանցի և ուսուցման նոր մեթոդների շնորհիվ մի քանի լեզվով խոսելն այլևս գերմարդկային հատկանիշ չէ, այլ հասանելի անհրաժեշտություն:

Հաշվի առնելով գլոբալիզացման համատեքստը՝ մշակվում են նոր օրակարգ և մեթոդաբանություն, որոնցում խաղը և երաժշտությունը կենտրոնական տեղ են զբաղեցնում: Դրանք դրական ազդեցություն են թողնում երեխայի խոսքի զարգացման և մտահորիզոնի ընդլայնման վրա, հետաքրքիր դարձնում օտարն ու անծանոթը, օգնում հաղթահարել հաղորդակցվելու, ելույթ ունենալու բարդույթը: Բացի լեզվի ուսուցումից, խաղերի և ինտերակտիվ դասավանդման միջոցով ուսուցիչն աշակերտին սովորեցնում է լինել ավելի հանդուրժող, համբերատար, հարգալից, լսելու ունակ:

Սակայն մասնագետները զգուշացնում են՝ առաջադրանքների կատարումը ոչ միշտ է դրական արդյունքներ ապահովում, քանի որ երեխան երբեմն կարող է մոտիվացված չլինել՝ նոր լեզու սովորելու, մինչդեռ նոր բան սկսելուց առաջ շահագրգռվածությունը գործի ամենակարևոր հատվածն է: Այս հարցում նույնպես օգնության են գալիս խաղը և երաժշտությունը՝ խոսելու երեխայի հետ իրեն հետաքրքիր բառամթերքով:

ԳԼՈՒԽ 2.

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԽԱՂԵՐԻ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ. ՆՈՐ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

2.1 Կրթական պլանավորում. խաղերի և երաժշտական տեխնիկայի կիրառումը օտար լեզվի դասավանդման մեջ

Աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում, առկա են օտար լեզուների ուսուցման հազարավոր մեթոդներ, համապատասխան ձեռնարկներ, ուսումնասիրություններ, ծրագրեր: Խաղերի միջոցով դասավանդման տեսանկյունից հիմնականում առանձնացվում են այուժետային, դիդակտիկ և դերային եղանակները:

Դրանց նպատակն է զարգացնել հաղորդակցական կարողությունները տեսական գիտելիքների և գործնական առաջադրանքների միջոցով: Սովորողներին առաջարկվում է մտապահել պարզ և հասկանալի արտահայտություններ, անգիր անել երգեր և բանաստեղծություններ, կարդալ բառարաններ, նոր բառերով կազմել շարադրություններ, երկխոսություններ, արձագանքել ուսուցչի հարցադրումներին՝ համապատասխան լեզվով:

Կարևոր է նշել, որ, ըստ մասնագետների, խաղերի և ճիշտ դասակազմակերպման դեպքում դրսևորվում են հաղորդակցության բոլոր կարևոր հատկանիշները՝ լեզվական խնդիրներն ինքնուրույն լուծելու ցանկություն, մտքերի ազատ արտահայտում, արագ արձագանքելու և օտար լեզվով խոսքը ձևակերպելու կարողություն:

Կրթական ծրագրերում, այդ թվում՝ մեր կողմից կիրառվող, առանձնացվում են նաև հետևյալ մեթոդները.

Ունկնդրում /Listening/

Աշակերտները լսում են օտար լեզվով երգեր, բանաստեղծություններ, պատմություններ, դիտում ֆիլմեր, տեսահոլովակներ, առանձնացնում իրենց անծանոթ բառերը, գտնում հայերեն համարժեքները, այնուհետև այդ նոր բառերով ստեղծում սեփական պատմությունները, ինչը նպաստում է նոր նյութի ավելի արդյունավետ յուրացմանը:

Խոսք /Speaking/

Ողջ դասաժամի ընթացքում ուսուցիչը ստեղծում է իրավիճակներ, առաջարկում խաղեր, որոնց միջոցով աշակերտները փորձում են արտասանել և իրենց խոսքում կիրառել սովորած նոր բառերը և արտահայտությունները: Տվյալ բաժնում առանձնացվում են երկխոսությունը և մենախոսությունը: Երկխոսության միջոցով աշակերտները առավել լավ են յուրացնում նոր գիտելիքները՝ կիսվելով դրանցով ընկերների կամ ուսուցչի հետ: Տվյալ դեպքում մանկավարժի խնդիրն է ստեղծել բարենպաստ, ընկերական, թեթև մթնոլորտ, բացատրել երեխաներին ցանկացած լեզվով ճիշտ հաղորդակցվելու և հասարակությանն ինտեգրվելու կարևորությունը:

Մենախոսության դեպքում մանկավարժն օգնում է աշակերտին հստակ և հակիրճ ձևակերպել սեփական մտքերը՝ օգտագործելով արդեն հայտնի օտարալեզու արտահայտությունները, բառերը, և, ամենակարևորը, չվախենալ սխալվելուց: Երեխան պետք է հասկանա՝ սխալվելը ուսուցման ամենակարևոր փուլերից մեկն է:

2.2 Ի՞նչ նորարարական մոտեցումներ են հարկավոր/հնարավոր խաղերի և երաժշտության միջոցով օտար լեզուների ուսուցման գործընթացում. նոր առաջարկներ

Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում կարևորագույն հարցը, որին փորձել ենք լուծում գտնել, հետևյալն է՝ «ինչպե՞ս շարժել երեխայի հետաքրքրությունը՝ սովորելու օտար լեզուներ և չկորցնել այն ուսուցման ընթացքում»: Նախևառաջ՝ հարկավոր է, որ նույնիսկ օտար լեզվով մանկավարժը «հասկանալի» լինի աշակերտի համար. բարձրաձայնի նրան հուզող հարցեր, կառուցի դասաժամը ակտուալ թեմաների շուրջ և մի կողմ դնի արդեն հնացած դասագրքերը, ձեռնակրկները և մեթոդաբանությունը: Ուսուցիչը պետք է աջակցի, լսի իր աշակերտների կարծիքը և հանդես չգա որպես միակ ճիշտ տեղեկատվության/գաղափարախոսության կրող:

Յուրաքանչյուր դաս պետք է հնարավորինս մոտ լինի բնական, ամենօրյա հաղորդակցությանը, որպեսզի աշակերտները չզգան «սովորելու պարտավորվածության» բեռը և ավելի արագ ու երկարաժամկետ արդյունքներ գրանցեն: Ուսումնական այս գործընթացի առանցքային կետը աշակերտներին ներկայացվող լեզվական նյութի հասանելիությունը և ակտիվ բառապաշարի ամրապնդումն է:

Ցանկացած մասնագետ պետք է ձեռքը պահի ժամանակի զարկերակին, ազատվի անցյալի կաղապարներից՝ նույնիսկ, գուցե, չկիսելով ներկայիս սերնդի հետաքրքրությունները:

Մեր հետազոտական աշխատանքի շրջանակում, բացի արդեն կիրառվող մեթոդներից, առաջարկում ենք հաստատագրել նոր միջոցներ՝ դասաժամերին լսել/երգել/երգել խմբով/վերլուծել ժամանակակից երգեր և երաժշտություն, աշակերտներին հանձնարարել առանձնացնել իրենց նախընտրած կատարողներին և ստեղծագործությունները, սովորել և ներկայացնել դրանք դասընկերներին, թարգմանել հայերեն,

առանձնացնել անծանոթ բառերը և դուրս գրել դրանց հայերեն համարժեքները, այդ նոր բառերով այնուհետև գրել սեփական երգը:

Ժամանակակից երեխաների օրակարգի մեծ մասն են կազմում սոցիալական հարթակները՝ YouTube, Instagram, Facebook, Twitter և այլն, նրանք հետևում են օտարազգի տարբեր բլոգերների, հայտնի մարդկանց, հիանում նրանցով, փորձում նմանակել, հասնել նույն հաջողություններին: Այս փաստը կարելի է օգտագործել հօգուտ նրանց ուսուցման. հանձնարարել աշակերտներին օտար լեզվով ներկայացնել իրենց սիրած վիրտուալ կերպարին, վերջինիս առանձնահատկությունները, միասին լսել նրանց մասնակցությամբ հարցազրույցներ, օգտակար և բովանդակային հաղորդումներ: Սա թույլ կտա աշակերտին կիսվել իր հետաքրքրություններով դասընկերների հետ, խոսել իր համար կարևոր թեմաներից, ինչն էլ ավելի կմոտիվացնի երեխային սովորել իր սիրելի կերպարի լեզուն: Այս բաղադրիչի շրջանակում հնարավոր են նաև առցանց հանդիպումներ լեզվի կրողների, գուցե նաև՝ հայտնի մարդկանց հետ:

Դասերի ընթացքում կարևոր է նաև կազմակերպել ֆիլմերի դիտումներ, որոնք կընտրի ինչպես ուսուցիչը, այնպես էլ աշակերտները. նոր ինֆորմացիան ավելի լավ յուրացնելու համար ֆիլմի դիտումից հետո կհանձնարարվի պատրաստել պրեզենտացիաներ, անցկացնել քննարկումներ:

Այժմ երիտասարդների շրջանում ակտուալ է նաև «Սթենդ–ափ» ժանրը. սա հնարավորություն է երեխաների համար օտար լեզվով խոսել իրենց անհանգստացնող թեմաների մասին, դառնալ ավելի անկաշկանդ, հանդես գալ հանրության առջև, մաքրել խոսքը ավելորդաբանություններից և սովորել արտահայտվել հակիրճ, ինչու ոչ՝ գտնել սեփական «Ես»-ը՝ փորձելով նմանակել սիրելի աստղերին:

Օգտակար կարող են լինել նաև ուսումնական էքսկուրսիաները: Դիտարժան վայրերի մասին աշակերտներին կարող է պատմել հենց էքսկուրսավարը կամ մանկավարժը՝ համապատասխան օտար լեզվով. էքսկուրսիայի ավարտին երեխաները կպատմեն իրենց տպավորությունների մասին. այսպիսով նրանց մոտ կզարգանան նաև նեղ ուղղվածության «բառապաշարներ»՝ ճանապարհորդություն, բնություն, կենդանական աշխարհ, ճարտարապետություն, պատմություն և այլն:

Եզրակացություն՝ բազմաշերտ և տարատեսակ խաղերի և ուսուցման մեթոդների հմուտ համադրությունը հետաքրքրացնում է օտար լեզվի և ցանկացած այլ առարկայի ուսուցումը, դարձնում դասապրոցեսը հաճույքի և ոչ «տանջանքի կամ պարտավորվածության զգացումի» աղբյուր, ապահովում կրթվածության բարձր մակարդակ, սովորեցնում մտածել/տրամաբանել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դինամիկ զարգացող աշխարհում ավելի ու ավելի պահանջված են դառնում օտար լեզուները, ձևակերպվում են ուսուցման նոր, ավելի արդյունավետ և քիչ ժամանակատար մեթոդներ: Օտար լեզուների, մասնավորապես՝ ռուսաց լեզվի իմացությունը նպաստում են մտավոր ունակությունների զարգացմանը, օգնում «լողալ տեղեկատվական անծայրածիր օվկիանոսում», ինտեգրվել բազմամշակութային հասարակությանը և դառնալ աշխարհի քաղաքացի:

Լեզուն հաղորդակցության, միջանձնային շփման ամենակարևոր միջոցն է, առանց որի անհնար է մարդու գոյությունն ու զարգացումը: Ուստի հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել օտար լեզուների ուսուցմանը արդեն նախադպրոցական տարիքից, փոխարինել անցյալի հնացած մեթոդաբանությունը արդիական օրակարգով և, ամենակարևորը, «ստիպել» երեխաներին սիրել սովորելը, դասերը, դպրոցը, համալսարանը, «քարոզել» այն գաղափարախոսությունը, որ սովորելը և նոր գիտելիքներ կուտակելը պարտավորություն չէ, և չի արվում ուսուցչին գոհացնելու կամ բարձր գնահատական ստանալու, այլ կրթվելու և կայանալու համար:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակում փորձել ենք ուսումնասիրել դասապրոցեսը ավելի ինտերակտիվ դարձնելու հնարավորությունները, հասկանալ խաղերի և երաժշտության միջոցով ուսումնական ծրագիրը կազմելու արդյունավետությունը: Առաջնային տեղ ենք հատկացրել աշակերտներին մոտիվացնելու և երկարաժամկետ հիմունքներով օտար լեզուներ սովորելու հանդեպ հետաքրքրություն առաջացնելու եղանակների մշակմանը:

Ուսումնասիրել ենք միջազգային և հայաստանյան փորձը և դրա հիման վրա հանդես եկել սեփական նորարարական առաջարկներով, որոնք «աշակերտակենտրոն» են և ուղղված են հարստացնելու սովորողների գիտելիքները «դասագրքային տրամաբանությունից» դուրս:

Մեր աշխատանքի գործնական արժեքը կայանում է նրանում, որ դրա շրջանակում արված մեթոդական առաջարկները կարող են կիրառվել ոչ միայն ցանկացած օտար լեզվի, այլև մի շարք այլ առարկաների դասավանդման ընթացքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Յու. Յուզբաշյան, «Երաժշտությունը 1-4-րդ դասարանների՝ում», Երևան, 2008
2. Н. Николаева, “Игра и ее роль в обучении иностранному языку”, Москва, 2019
3. А. Куртукова, “Игровые приемы при формировании навыков овладения иностранным языком у детей старшего дошкольного возраста”, 2014
4. И. Андреева, “Использование разножанровой молодежной музыки в обучении монологической речи учащихся-подростков”, 2002
5. М. Перетятко, “Использование музыки как технологии на уроках иностранного языка”, 2016
6. Д. Кабалевский, “Основные принципы и методы программы по музыке для общеобразовательной школы”, Москва, 2022
7. Ш. Аманашвили, “Психологические особенности усвоения второго языка младшими школьниками”, Москва- Воронеж, 2004
8. И. Журавлева, “Возрастные особенности при обучении иностранному языку”, 2012
9. С. Миллер, “Психология игры”, 1999
10. В. Миронова, “Открытые уроки и праздники на английском языке”, 2006

ՀԱՎԵԼՎԱԾ

План урока по русскому языку в 3-ем классе. Учебник "Русский язык"

Тема урока: Едет Ежик.

Тип урока: комбинированный

Цель урока: формирование понимания и систематизации знаний; познакомить учеников со стихотворением и умение работать с текстом; развитие памяти, мышления.

Ход урока:

1. Организационный момент.

Прозвенел сейчас звонок

Начинается урок.

Ждут нас книжки и тетрадки.

Учитель: Вы готовы?

Ученики:Все в порядке.

2. Проверка домашнего задания: Чтение и пересказ сказки “По щучьему веленью”. Оценивание учащихся.

3. Объяснение нового материала. Разучивание стихотворения буквы Е.

Выполнение предтекстовых заданий 1-4.Чтение учителем стихотворения “Едет Ежик”.

4. Ответы на вопросы: а) Куда ехал Ежик? б) Когда Крот и Ежик собирали листья? в) О чем попросил Крот Ежика? г) Что случилось через год? д) Вернул ли Крот Ежику свой долг?

5. Чтение учащимися в лицах стихотворения. Методом Кластер учитель записывает под диктовку учеников слово

ЖИВОТНЫЕ

6. Отгадать загадку.

Сердитый недотрога

Живет в глуши лесной.

Иголок очень много,

А нитки ни одной. (ежик).

Отгадать загадку-складку (упр. 6).

7. Физкультпауза.

Мы немного отдохнем,

Встанем, глубоко вздохнем,

Руки в стороны, вперед,

Вправо, влево поворот.

Дружно хлопаем руками (1-2-3),

Дружно топаем ногами (1-2-3).

Тихо сядем мы за стол

И продолжим разговор.

8. Речевая подготовка.

--Как по-другому можно назвать ежа? (животное, зверек)

Применить метод Синквейн со словом

Еж –(колючий, медлительный, добрый, хозяйственный, заботливый и т.п).

Чтение скороговорки (упр. 8). Кто быстрее?

9. Словарная работа. Выполнение упражнений 13.

10. Игра. Буква потерялась.

…рш, …жик, …лка, …нот, …реван.

11. Попробовать составить метод Синквейн со словом ЕЖИК.

Ежик

Работящий, добрый

Страдает, ищет, стремится

Верит, что Крот вернет должок.

Зверек!

12. Домашнее задание: Упр. 9, выразительное чтение стихия “Едет Ежик” (отрывок выучить наизусть).